ԵԴ1/0589/01/24
(ՀԿԴ/0278/01/23)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 ապրիլի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/0589/01/24 (ՀԿԴ/0278/01/23) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 4-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի դեկտեմբերի 4-ին Հակակոռուպցիոն դատարանում ստացվել է Միքայել Արայի Մինասյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 190–րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 62267323 (ՀԿԴ/0278/01/23) քրեական վարույթը:

1.1. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 6-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0278/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թվականի դեկտեմբերի 18-ին նախնական դատաքննություն նշանակելու մասին:

2. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մարտի 25-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0278/01/23 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի ապրիլի 4-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0278/01/23 (ԵԴ1/0589/01/24) քրեական վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի ապրիլի 8-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Միքայել Արայի Մինասյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190–րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ նա *«(…) 2008 թվականից մինչև 2012 թվականը զբաղեցնելով ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնը, իսկ 2013 թվականից մինչև 2018 թվականը՝ հանդիսանալով ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ՝ Սուրբ Աթոռում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, որպիսի հանգամանքներով պայմանավորված լինելով պաշտոնատար անձ, «Հանրային ծառայության մասին» (ընդունվել է 26.05.2011թ., ուժը կորցրել է 20.11.2019թ.) և «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արգելքին հակառակ՝ մինչև 2016 թվականն ինչպես անձամբ, այնպես էլ իր մերձիմներ Արմեն Պետրոսյանի և Լեռնիդ Արևշատյանի միջոցով մասնակցել է 2010 թվականին հիմնադրված՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ընկերության կառավարմանը՝ օրինականացնելով հիշյալ ապօրինի գործունեության արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքը:*

Այսպես՝

ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 21-ի թիվ 435-Ն որոշմամբ ՀՀ էներգետիկայի նախարարության «Հայէներգանորոգում» ՓԲ ընկերության գույքի կազմից առանձնացված «Զորա ՀԷԿ» տեղամասի՝ պետական սեփականություն հանդիսացող գույքի ներդրմամբ ստեղծվել է «Զորա ՀԷԿ» ՓԲ ընկերությունը, որի բաժնետոմսերի կառավարման լիազորությունը ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 15-ի թիվ 36-Ն որոշմամբ վերապահվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը:

2010 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մշակվել է «Զորա ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից գույքի օտարման խոշոր գործարք կնքելուն հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության գաղտնի որոշման նախագիծը, որով առաջարկվել է թույլատրել պաշտպանության նախարարությանը՝ հավանություն տալու խոշոր գործարքի կնքմամբ՝ 3.600.000.000 ՀՀ դրամ գումարով ընկերության գույքի օտարմանը Միքայել Մինասյանին փոխկապակցված անձանց՝ Արմեն Պետրոսյանի և Լեոնիդ Արևշատյանի կողմից Բրիտանական Վիրջինյան կղզիներում հաշվառված «Էմ Ջի Դի Սի ինք» առևտրային ընկերության և «Վոդ Գրուպ» ՍՊ ընկերության միջոցով 2010 թվականի հոկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված և փաստացի՝ Միքայել Մինասյանի կողմից ղեկավարվող «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերությանը:

Ներկայացված նախագիծը գաղտնի ընթացակարգով քննարկվել է ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի նիստում և ընդունվել է թիվ 1660-Ն որոշումը, որի հիման վրա 2010 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված գույքի առուվաճառքի պայմանագրով «Զորա ՀԷԿ» ՓԲ ընկերության 4.646.400.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով գույքը 3.600.000.000 ՀՀ դրամով օտարվել է «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերությանը:

«Զորա ՀԷԿ» ՓԲ ընկերության գույքի օտարումից հետո, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանի կողմից ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի նիստում որպես լրացուցիչ հարց ներկայացվել է «Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու

վերաբերյալ առաջարկության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին փոքր հիդրոէլեկտրակայանների համար սահմանված 10 Մվտ հզորության փոխարեն առավելագույն հզորություն սահմանել մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորությունը: Ներկայացված նախագիծը քննարկվել է ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի նիստում և ընդունվել թիվ 1300-Ա որոշումը, որից հետո նախագիծը և կից փաստաթղթերի փաթեթը ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2011 թվականի սեպտեմբերի 9-ին առաքվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:

Այնուհետև, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամները, ստանալով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով առաքված՝ փաստացի «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության համար արտոնություններ սահմանելու նպատակով ընդունված՝ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 1300-Ա որոշումը, 2011 թվականի սեպտեմբերի 28-ին կայացրել են թիվ 448-Ն որոշումը, ինչի արդյունքում, հիշյալ միջակայքում գործող, խոշոր ՀԷԿ հանդիսացող միակ՝ 26,4 Մվտ տեղակայված հզորության «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության հիդրոէլեկտրակայանն ընդգրկվել է փոքր հիդրոէլեկտրակայանների ցանկում՝ օգտվելով հիշյալ տեսակի կայանների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ ֆիքսված և առավել բարձր սակագներով էլեկտրական էներգիա վաճառելու հնարավորությունից:

Արդյունքում՝ «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները, մինչ այդ 10 Մվտ-ից ավելի տեղակայված հզորություն ունեցող հիդրոէլեկտրակայանների (կասկադների), ջերմային կայանների և ատոմային կայանների համար կիրառվող՝ «Էլեկտրական էներգիա արտադրող ընկերությունների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագների հաշվարկման մեթոդաբանությունը հաստատելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի սեպտեմբերի 16-ի 125-Ն որոշմամբ հաստատված մեթոդիկայի փոխարեն, 2012 թվականից սկսած հանձնաժողովի կողմից հաշվարկվել են փոքր

հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու և այդ կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի 2007 թվականի վաճառքի սակագները սահմանելու մասին» ՀՀ հանրային ծառայություններ կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 4-ի թիվ 207-Ն որոշմամբ հաստատված մեթոդիկայի համաձայն: Դրանով պայմանավորված՝ «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության հիդրոէլեկտրակայանից արտադրված և առաքված էլեկտրական էներգիայի վաճառքի համար 2012-2016 թվականների ընթացքում սահմանվելիք սակագների փոխարեն նույն ժամանակահատվածների համար սահմանվել են կրկնակին գերազանցող սակագներ, որի արդյունքում «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում էլեկտրական էներգիա սպառող ֆիզիկական և իրավաբանական անձանցից հավելյալ ստացվել է առանձնապես խոշոր չափերի՝ 3.750.837.591 ՀՀ դրամ գումար:

Մինչ այդ, «Զորա ՀԷԿ» ՓԲ ընկերության գույքը «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության միջոցով ձեռք բերելուց հետո՝ «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերի առուվաճառքի 2011 թվականի հոկտեմբերի 13-ի պայմանագրի կնքմամբ Միքայել Մինասյանը 2011 թվականին միջնորդավորված եղանակով դարձել է Արմեն Պետրոսյանի ու Լեռնիդ Արևշատյանի՝ համապատասխանաբար 19 և 81 տոկոս հարաբերակցությամբ բաժնեմասերի իրական շահառու:

2011 թվականի նոյեմբերի 14-ին կնքված բաժնեմասերի գնման պայմանագրով՝ «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության՝ Լեռնիդ Արևշատյանի անվամբ հաշվառված 81 տոկոս բաժնեմասերից 70 տոկոսը, Ընկերության բաժնետոմսերի քանակին համամասնորեն հաշվարկելիս՝ էականորեն ցածր՝ շուրջ 21 տոկոս կազմող 768.180.000 ՀՀ դրամով, օտարվել է իրալական «ՌԵՆԿՈ Ս.Պ.Ա» բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի հոկտեմբերի 24-ին հիմնադրված «Ռեալ Էներգո» ՍՊ ընկերությանը, որի

շրջանակներում 2011 թվականի նոյեմբերի 14-ին «Ռեալ Էներգո» ՍՊ ընկերության կողմից Լեոնիդ Արևշատյանի՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում գործող 1570003572340100 հաշվեհամարին փոխանցվել է 768.180.000 ՀՀ դրամ գումար:

Հետագայում՝ 2016 թվականի հոկտեմբերի 11-ին, կնքված բաժնեմասերի առուվաճառքի պայմանագրերի համաձայն՝ «Էներգո Ինվեսթ Հոլդինգ» ՓԲ ընկերությունը «Ռեալէներգո» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր «Ռենկո Ս.Պ.Ա» բաժնետիրական ընկերությունից 5.972.460 ԱՄՆ դոլար գումարով ձեռք է բերել «Ռեալէներգո» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասերը:

Բացի այդ, նույն օրվա մեկ այլ՝ բաժնեմասերի առուվաճառքի պայմանագրերի հիման վրա «Էներգո Ինվեսթ Հոլդինգ» ՓԲ ընկերությունը «Զորագետ Հիդրո» ՍՊԸ-ի 11 տոկոս բաժնեմասի սեփականատեր Լեոնիդ Արևշատյանից 571.800.000 ՀՀ դրամ գումարով ձեռք է բերել նրան պատկանող բաժնեմասերը, իսկ Արմեն Պետրոսյանից՝ 1.334.200.000 ՀՀ դրամ գումարով՝ նրան պատկանող բաժնեմասերի 19 տոկոսը:

Արդյունքում՝ Միքայել Մինասյանը, 2008 թվականից մինչև 2012 թվականը զբաղեցնելով ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի, իսկ 2013 թվականից մինչև 2018 թվականը հանդիսանալով ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ՝ զբաղեցնելով Սուրբ Աթոռում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնը, այսինքն՝ լինելով պաշտոնատար անձ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով (ընդունվել է 26.05.2011թ., ուժը կորցրել է 20.11.2019թ.) և «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված արգելքին հակառակ ինչպես անձամբ, այնպես էլ Արմեն Պետրոսյանի և Լեոնիդ Արևշատյանի միջոցով մասնակցել է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության կառավարմանը, քողարկել է ընկերության 30 տոկոս բաժնեմասերի (Արմեն Պետրոսյան՝ 19 տոկոս, Լեոնիդ Արևշատյան՝ 11 տոկոս) իրական շահառու հանդիսանալու հանգամանքը, որի արդյունքում հիշյալ ժամանակահատվածում ստացել է 1.113.698.628 ՀՀ դրամ շահաբաժին:

Վերը նշված ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու արդյունքում ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույքն օրինականացնելու միասնական դիտավորությամբ փաստացի ստացված գումարների հանցավոր ծագումը թեղաթյուրելու, դրա իրական պատկանելիությունը թաքցնելու նպատակով Միքայել Մինասյանը վերոհիշյալ գումարները միախառնել է իր այլ եկամուտների հետ, ապա տարատեսակ քաղաքացիաիրավական գործարքների, այն է՝ տարբեր բանկային գործարքներ կատարելու եղանակներով դրանց հաղորդել է օրինական տեսք:

Այսպես.

Միքայել Մինասյանը ձեռնարկատիրական գործունեությանը մասնակցելու արդյունքում փաստացի իրեն պատկանող և Լեռնիդ Արևշատյանի անվամբ հաշվառված 81 տոկոս բաժնեմասերից 70 տոկոսը 2011 թվականի նոյեմբերի 14-ին 768.180.000 ՀՀ դրամով վերջինի միջոցով օտարել է իտալական «ՌԵՆԿՈ Ս.Պ.Ա» բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի հոկտեմբերի 24-ին հիմնադրված «Ռեալ Էներգո» ՍՊ ընկերությանը, ինչի արդյունքում 2011 թվականի նոյեմբերի 14-ին «Ռեալ Էներգո» ՍՊ ընկերության կողմից Լեռնիդ Արևշատյանի՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում գործող 1570003572340100 հաշվեհամարին փոխանցվել է 768.180.000 ՀՀ դրամ գումար:

Փոխանցված գումարը նույն օրը փոխակերպվել է 2.000.000 ԱՄՆ դոլարի, որից՝ 900.000 ԱՄՆ դոլարը կանխիկացվել է Լեռնիդ Արևշատյանի կողմից:

Այնուհետև՝ հիշյալ 900.000 ԱՄՆ դոլարից 204.260 ԱՄՆ դոլար գումարը մուտքագրվել է Միքայել Մինասյանի՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում գործող 1570004538840301 հաշվեհամարին, 100.000 ԱՄՆ դոլարը՝ Լեռնիդ Արևշատյանի՝ «Ամերիա Բանկ» ՓԲ ընկերությունում սպասարկվող 1570003572340101 հաշվեհամարին, իսկ 595.740 ԱՄՆ դոլարը՝ Միքայել Մինասյանի հետ փոխկապակցված՝ նրա օգնական և բանկային գործարքներ կատարելու համար վերջինի կողմից լիազորված անձ Մարինա Մանուկյանի՝ «Ամերիա Բանկ» ՓԲ ընկերության թիվ 1570012247630101 դոլարային հաշվեհամարին:

Այնուհետև՝ Մարինա Մանուկյանը 2011 թվականի նոյեմբերի 11-ից մինչ 2012 թվականի փետրվարի 13-ն ընկած ժամանակահատվածում, իր հաշվեհամարին մուտքագրված վերը նշված գումարից 408.000 ԱՄՆ դոլարը կանխիկացրել է, 5.532 ԱՄՆ դոլարը 2012 թվականի հունվարի 11-ին փոխանցել է «CAMELOTH LLC»-ին՝ որպես Միքայել Մինասյանի կնոջ՝ Անուշ Մինասյանի հյուրանոցային ծախս, 111.716 ԱՄՆ դոլարը 2011 թվականի նոյեմբերի 11-ից մինչ 2012 թվականի փետրվարի 13-ն ընկած ժամանակահատվածում փոխանցել է իր դրամային թիվ 1570012247630300 հաշվեհամարին ու տարբեր օրերի ընթացքում կանխիկացրել, իսկ 70.475,13 ԱՄՆ դոլարը նույն ժամանակահատվածում, տարբեր գործարքներով փոխանցել է իր անվամբ գործող թիվ 1570012247630146 հաշվեհամարին, ինչն էլ ամբողջությամբ նույն ժամանակահատվածում փոխանցել է Միքայել Մինասյանի՝ 1570004538840146 և վերջինի մոր՝ Արմինե Հասրաթյանի՝ 1570013316670246 հաշվեհամարներին:

Բացի այդ, 2013 թվականի մայիս 06-ին Արմեն Պետրոսյանի՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից ապասարկվող թիվ 1570004442630100 հաշվեհամարին մուտքագրվել է 45.242.229,10 ՀՀ դրամ՝ որպես 2012 թվականի «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության շահաբաժին:

Հաջորդ օրը՝ 2013 թվականի մայիսի 07-ին, հիշյալ հաշվեհամարից Արմեն Պետրոսյանի կողմից կանխիկացվել է 45.250.000 ՀՀ դրամ: Նշված գործարքից շուրջ մեկ ամիս անց՝ 2013 թվականի հունիսի 04-ին, Միքայել Մինասյանի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից ապասարկվող թիվ 1570004538840146 հաշվեհամարին Մարինա Մանուկյանի կողմից կանխիկ եղանակով մուտքագրվել է 45.251.892 ՀՀ դրամին համարժեք 83.300 եվրո:

Նույն օրը՝ 2013 թվականի հունիսի 04-ին, հիշյալ հաշվեհամարից Միքայել Մինասյանը 68.571 եվրո փոխանցել է իր արտասահմանյան՝ գերմանական թիվ DE28512305000018099205 հաշվեհամարին, իսկ նույն օրվա մեկ այլ գործարքով՝ 5.000 եվրո՝ «BMW ROMA SRL»-ին պատկանող IT44J0310403216000000770004 հաշվեհամարին, որի նկարագրության մասում նշվել է նաև «MIKAYEL MINASYAN» գրառումը: Այնուհետև՝ 2013 թվականի հունիսի 27-ին, Մ.Մինասյանի կողմից հիշյալ հաշվեհամարից կանխիկացվել է նաև 9.683 եվրոն:

Բացի այդ, 2014 թվականի հուլիսի 03-ին Լեոնիդ Արևշատյանի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում սպասարկվող թիվ 1570003572340100 հաշվեհամարին մուտք է եղել 44.000.000 ՀՀ դրամ՝ որպես 2013 թվականի «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության շահաբաժին: Լ.Արևշատյանը նույն օրը 40.850.000 ՀՀ դրամը փոխարկելով 100.000 ԱՄՆ դոլարի՝ փոխանցել է իր «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող թիվ 1570003572340201 հաշվեհամարին, որի հաշվեկշռին մինչ փոխանցումը առկա է եղել 534.554,57 ԱՄՆ դոլար:

Միևնույն ժամանակ՝ 2014 թվականին հուլիսի 07-ին և հուլիսի 11-ին, երկու գործարքներով ընդհանուր 91.237,86 դոլարը (46.049.67+45.188.19) վերածելով 37.088.190 ՀՀ դրամի՝ փոխանցել է իր «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող թիվ 1570003572340100 հաշվեհամարին և նույն օրերին կանխիկացրել:

Մինչ այդ՝ 2014 թվականի հուլիսի 03-ին, Արմեն Պետրոսյանի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող թիվ 1570004442630100 հաշվեհամարին մուտք է եղել 76.000.000 ՀՀ դրամ՝ որպես 2013 թվականի «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության շահաբաժին, որից՝ 75.997.223,80 ՀՀ դրամը նույն օրվա 2 գործարքներով կանխիկացվել է վերջինի կողմից:

Լ.Արևշատյանի և Ա.Պետրոսյանի՝ վերը նկարագրված գործարքներից, այն է՝ հիշյալ գումարների կանխիկացումներից հետո՝ 2014 թվականի հուլիսի 16-ին, Մարինա Մանուկյանը 47.000 եվրո կանխիկ մուտքագրել է իր «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող թիվ 1570012247630146 հաշվեհամարին, որը նույն օրը փոխանցման և կանխիկացման եղանակով տնօրինել է: Մասնավորապես՝ նույն օրը, 19.000 եվրոն փոխանցել է «Valle Dell'Erica» հյուրանոցային համալիրը սպասարկող՝ իտալական IT53I0504032360000000000037 հաշվեհամարին, որի նկարագրություն մասում նշվել է «MIKAYEL MINASYAN CONTRATTO» գրառումը, 22.000 եվրոն փոխանցել Միքայել Մինասյանի արտաասահմանյան՝ իտալական IT05E0103003203000002145631 հաշվեհամարին, իսկ 6.000 եվրոն կանխիկ ելքագրել: Նույն օրը Մարինա Մանուկյանը 6.300 եվրո կանխիկ մուտք է արել Միքայել Մինասյանի կնոջ՝ Անուշ Մինասյանի՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող թիվ 1570014922907024 6 քարտային հաշվեհամարին:

Դրանից հետո՝ 2014 թվականի հուլիսի 29-ին, Մարինա Մանուկյանը «Ամերիա Բանկ» ՓԲ ընկերությունում ձեռք է բերել 75.900 եվրո՝ դրա դիմաց վճարելով 41.631.150 ՀՀ դրամ, որից հետո 62.900 եվրոն կանխիկ մուրքագրել է իր «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող թիվ 1570012247630146 հաշվեհամարին: Նույն օրը, հիշյալ գումարից 40.100 եվրոն փոխանցել է Միքայել Մինասյանի արտասահմանյան՝ գերմանական թիվ DE28512305000018099205 հաշվեհամարին, իսկ 22.800 եվրոն՝ Միքայել Մինասյանի արտասահմանյան՝ իտալական IT05E0103003203000002145631 հաշվեհամարին:

Այնուհետև՝ 2 օր անց՝ 2014 թվականի հուլիսի 31-ին, Մարինա Մանուկյանը «Ամերիա Բանկ» ՓԲ ընկերությունում ձեռք է բերել ընդհանուր 106.701,74 եվրո՝ դրա դիմաց վճարելով 58.249.500,90 ՀՀ դրամ:

Նույն օրը Մարինա Մանուկյանը 1695,74 եվրո կանխիկ մուրք է արել Միքայել Մինասյանի կնոջ՝ Անուշ Մինասյանի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող թիվ 15700149229070246 քարտային հաշվեհամարին, իսկ 2.350 եվրո մուրքագրել է իր «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող թիվ 1570012247630146 հաշվեհամարին և փոխանցել Միքայել Մինասյանի արտասահմանյան՝ իտալական IT05E0103003203000002145631 հաշվեհամարին:

Բացի այդ, Լեոնիդ Արևշատյանի կողմից «Զորագետ Հիդրո» ՍՊ ընկերության իր բաժնեմասն օտարելու գործարքով 2016 թվականի հոկտեմբերի 11-ին «Էներգո Ինվեստ Հոլդինգ» ՍՊ ընկերության հաշվեհամարից Լեոնիդ Արևշատյանի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում ունեցած թիվ 1570003572340100 հաշվեհամարին փոխանցվել է 571.800.000 ՀՀ դրամ գումար: Նույն օրը Լեոնիդ Արևշատյանը հիշյալ գումարն ամբողջությամբ փոխակերպել է 1.200.000 դոլարի՝ փոխանցելով նույն բանկում իր թիվ 1570003572340201 հաշվեհամարին:

Հաջորդ օրը՝ 2016 թվականի հոկտեմբերի 12-ին, Լ.Արևշատյանը հիշյալ հաշվեհամարից կանխիկացրել է 33.355.000 ՀՀ դրամին համարժեք 70.000 ԱՄՆ դոլար, որից հետո՝ 2016 թվականի հոկտեմբերի 17-ին, Մարինա Մանուկյանի կողմից «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում իրականացվել է արտարժույթի փոխանակում, ինչի արդյունքում վերջինը ստացել է 33.604.715 ՀՀ դրամին համարժեք 64.070 եվրո:

Նույն օրը Մարինա Մանուկյանը 21.000 եվրոն կանխիկ մուտքագրել է Միքայել Մինասյանի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում գործող թիվ 1570004538840346 հաշվեհամարին, որով մարվել է Մ.Մինասյանի անվամբ թիվ TO015719 պայմանագրով առկա օվերդրաֆտը:

Միաժամանակ, նույն օրը Մարինա Մանուկյանը Մ.Մինասյանի մոր՝ Արմինե Հասրաթյանի թիվ 1570013316670246 հաշվեհամարին կանխիկ մուտքագրել է 7.540 եվրո: Նույն օրը Մարինա Մանուկյանը Միքայել Մինասյանի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում ունեցած թիվ 1570004538840146 հաշվեհամարին կանխիկ մուտքագրել է 27.520 եվրո, իսկ Մ.Մինասյանի կնոջ՝ Անուշ Սերժի Մինասյանի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության թիվ 1570014929070246 հաշվեհամարին՝ 8.010 եվրո:

Բացի այդ, 2017 թվականի հունիսի 19-ին Լեոնիդ Արևշատյանն իր «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում գործող 1570003572340201 հաշվեհամարից կանխիկացրել է 130.008.528 ՀՀ դրամին համարժեք 270.288 ԱՄՆ դոլար: Նույն օրը Մարինա Մանուկյանը Միքայել Մինասյանի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում սպասարկվող 1570004538840146 հաշվեհամարին կանխիկ մուտքագրել է 129.220.800 ՀՀ դրամին համարժեք 240.000 եվրո: Հիշյալ գումարը, Միքայել Մինասյանն իր հերթին հաջորդ օրը՝ 2017 թվականի հունիսի 20-ին, ամբողջությամբ փոխանցել է իր անվամբ առկա արտասահմանյան՝ իտալական IT05E0103003203000002145631 հաշվեհամարին:

Այսպիսով՝ վերը նկարագրված գործողությունների հետևանքով Միքայել Մինասյանի կողմից թաքցվել է գույքերի իրական պատկանելիությունը, խեղաթյուրվել է դրանց հանցավոր ծագումը, որպիսի գործողությունների արդյունքում օրինականացվել է հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի՝ 333.861.167,90 ՀՀ դրամը (…)»[1]:

6. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մարտի 25-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն քրեական գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ քրեական գործը մեղադրական եզրակացությունը*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 47, թերթեր 175-182:

հաստատվել և վարույթի նյութերը ՀՀ հակակոռուպցիոն դատարան է հանձնվել այն պատճառով, որ մեղադրյալ Միքայել Մինասյանին մեղսագրվում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքի կատարում, որը նույն օրենսգրքի 6-րդ հավելվածի համաձայն՝ ներառված է եղել կոռուպցիոն հանցագործությունների ցանկում:

Ինչպես արդեն իսկ նշվել է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածին: Մինչև 2024 թվականի փետրվարի 6-ը՝ նշված հանցակազմը պարունակող հոդվածն ինչպես նախկին, այնպես էլ գործող ՀՀ քրեական օրենսգրքերով, առանց որևէ բացառության, նախատեսված է եղել կոռուպցիոն հանցագործությունների ցանկերում (նախկին օրենսգրքի հավելված N 6, գործող օրենսգրքի՝ հավելված N 1):

2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած փոփոխություններով ստացվել է այնպես, որ փողերի լվացումն ինքնին կոռուպցիոն հանցագործություն չէ, այլ հանդիսանում է այդպիսին բացառապես, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Միաժամանակ, Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն օրենքը չի նախատեսել որևէ անցումային դրույթ կամ մինչ նշված փոփոխությունը քննվող քրեական գործերի մասին հիշատակում: Նշվածից ակնհայտ է, որ փոփոխությունը վերաբերելի է բոլոր քրեական գործերին՝ անկախ դրանց քննության փուլից:

Հարկ է արձանագրել, որ մեղադրյալ Միքայել Մինասյանն իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքը չի կատարել ինչպես պաշտոնեական դիրքն օգտագործելով, այնպես էլ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով: Ավելին՝ այդ մասին որևէ նշում առկա չէ ոչ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ և ոչ էլ

մեղադրական եզրակացությունում, ինչի մասին հավաստեց նաև հանրային մեղադրողը:

Դատարանը գտնում է, որ ընդդատության հարցը որոշելիս էական նշանակություն ունի մեղադրանքի փաստական նկարագիրը, քանի որ այն իր մեջ պետք է ներառի և դրանում պետք է նկարագրվեն մեղսագրվող արարքի բոլոր հատկանիշները, հանցակազմի տարրերը, այն որակյալ դարձնող յուրաքանչյուր հանգամանքները:

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելը՝ ծառայողական կենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով կարգադրիչ լիազորությունները կամ ծառայողական լիազորությունները կամ ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելն է:

Սույն դեպքում՝ ըստ մեղադրանքի փաստական նկարագրության՝ Միքայել Մինասյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար, որ ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույքն օրինականացնելու միասնական դիտավորությամբ փաստացի ստացված գումարների հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով Միքայել Մինասյանը վերոհիշյալ գումարները միախառնել է իր այլ եկամուտների հետ, ապա տարատեսակ քաղաքացիահրավական գործարքների, այն է՝ տարբեր բանկային գործարքներ կատարելու եղանակներով դրանց հաղորդել է օրինական տեսք, որի հետևանքով Միքայել Մինասյանի կողմից թաքցվել է գույքերի իրական պատկանելիությունը, խեղաթյուրվել է դրանց հանցավոր ծագումը, որպիսի գործողությունների արդյունքում օրինականացվել է հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի՝ 333.861.167,90 ՀՀ դրամը:

Հետևաբար՝ թիվ ՀԿԴ/0278/01/23 քրեական գործով մեղադրյալ Միքայել Մինասյանը մեղսագրվող արարքը չի կատարել իշխանական կամ ծառայողական լիազորություններր կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով (պաշտոնեական դիրքն օգտագործելով), ուստի բացակայում է նշված հանցակազմը կոռուպցիոն բնույթի հանցանք դարձնող հանգամանքը, ինչը ենթադրում է, որ քրեական գործն այլևս ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

Դատարանը նշվածը գնահատելիս հաշվի է առնում նաև այն, որ 2024 թվականի մարտի 25–ի դատական նիստի ընթացքում սույն գործով հանրային մեղադրողը ևս այն դիրքորոշմանն է, որ սույն գործն այլևս ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին՝ միջնորդելով քրեական գործն ուղարկել ըստ ընդդատության:

Հարկ է նշել, որ նմանատիպ իրավիճակների համար օրենսդիրը սահմանել է, որ այն դեպքերում, երբ նախնական դատաքննության ընթացքում Դատարանը պարզում է, որ փվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:

Ընդ որում, նախնական դատաքննության ընթացքում վարույթն ընդդատության փոխանցելու պահանջն իմպերատիվ է, և որևէ բացառություն սահմանված չէ:

Միևնույն ժամանակ, Դատարանն արձանագրում է, որ պատշաճ ընդդատությունը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրատարր, ուստի ոչ ոք չի կարող զրկվել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննվելու իրավունքից, որոնց ընդդատությանը կամ իրավասությանն այն վերապահված է օրենքով:

Ավելին՝ ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված և 2024 թվականի փետրվարի 6-ին ուժի մեջ մտած ՀՕ-31-Ն օրենքի հիման վրա ընդդատությամբ փոխանցված գործերով բարձրացված ընդդատության մասին վեճերը լուծելիս ՀՀ վճռաբեկ դատարանը կայուն դիրքորոշում է ձևավորել, որ նշված փոփոխությամբ գործերը պետք է փոխանցվեն ըստ առարկայական ընդդատության, եթե գործի քննությունը գտնվում է նախնական դատաքննության փուլում, իսկ եթե անցում է

կատարվել հիմնական դատաքննություններին, ապա գործի քննությունը պետք է շարունակվի իրականացվել նույն դատարանում:

Հետևաբար՝ հաշվի առնելով այն, որ ՀՀ քրեական օրենսգրքում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ, որի ուժով ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված արարքը, առանց իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու, կոռուպցիոն բնույթի հանցագործություն չի համարվում, իսկ թիվ ՀԿԴ/0278/01/23 քրեական գործով մեղադրյալին մեղսագրվող արարքն այլևս կոռուպցիոն հանցանք չի հանդիսանում, արդյունքում՝ քրեական գործը կոռուպցիոն բնույթի չէ և դրա քննությունը գտնվում է նախնական դատաքննությունների փուլում՝ Դատարանը գտնում է, որ քրեական գործն ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին (…)»[2]:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Տվյալ դեպքում, ըստ մեղադրանքի փաստական նկարագրության, Միքայել Արայի Մինասյանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ այն արարքի համար, որ նա, 2008 թվականից մինչև 2012 թվականը զբաղեցնելով ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի, իսկ 2013 թվականից մինչև 2018 թվականը հանդիսանալով ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ՝ Սուրբ Աթոռում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, որպիսի հանգամանքներով պայմանավորված՝ լինելով պաշտոնատար անձ, «Հանրային ծառայության մասին» (ընդունվել է 2011 թվականի մայիսի 26-ին, ուժը կորցրել է 2019 թվականի նոյեմբերի 20-ին) և «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքներով սահմանված՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արգելքին հակառակ՝ մինչև 2016 թվականն ինչպես անձամբ, այնպես էլ իր մերձիմներ Արմեն Պետրոսյանի և Լեռնիդ Արևշատյանի միջոցով մասնակցել է 2010 թվականին հիմնադրված՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ընկերության կառավարմանը՝ օրինականացնելով հիշյալ ապօրինի*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 49, թերթեր 57-68:

գործունեության արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքը:

Հետևաբար՝ ըստ մեղադրանքի փաստական նկարագրության, առնվազն այս փուլում, առանց ապացույցների հետազոտման, հնարավոր չէ միանշանակ դատողություն անել այն մասին, որ թիվ ԵԴ1/0589/01/24 (ՀԿԴ/0278/01/23) քրեական գործով մեղադրյալ Միքայել Մինասյանը մեղսագրվող արարքը չի կատարել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով (պաշտոնեական դիրքն օգտագործելով):

(…)

Բացի այդ, Միքայել Մինասյանի մեղադրանքի փաստական նկարագրության մեջ զետեղված վերոգրյալ փաստական հանգամանքի առկայության պայմաններում առնվազն անհասկանալի և անտրամաբանական է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2024 թվականի մարտի 25-ի՝ «Քրեական գործն ըստ առարկայական ընդդատության ուղարկելու մասին» թիվ ՀԿԴ/0278/01/23 որոշմամբ արված այն եզրահանգումը, որ Միքայել Մինասյանն իրեն մեղսագրվող ենթադրյալ արարքը չի կատարել ինչպես պաշտոնեական դիրքն օգտագործելով, այնպես էլ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ավելին՝ այդ մասին որևէ նշում առկա չէ ոչ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ և ոչ էլ մեղադրական եզրակացությունում, այնինչ հակառակը, նշված հանգամանքի մասին վկայող նշում առկա է ինչպես քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ, այնպես էլ մեղադրական եզրակացությունում:

Ընդ որում՝ հատկանշական է այն հանգամանքը, որ եթե պայմանականորեն ընդունենք, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի եզրահանգումներն իրավաչափ են, այն է՝ Միքայել Մինասյանը մեղսագրվող արարքը չի կատարել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով (պաշտոնեական դիրքն օգտագործելով), ապա տրամաբանական հարց է առաջանում, թե որն է և ինչն է նպատակը Միքայել Մինասյանին

մեղսագրվող արարքի փաստական նկարագրության մեջ վկայակոչել այն հանգամանքը, որ վերջինը 2008 թվականից մինչև 2012 թվականը զբաղեցրել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնը, իսկ 2013 թվականից մինչև 2018 թվականը հանդիսացել է ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ՝ Սուրբ Աթոռում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, որպիսի հանգամանքներով պայմանավորված՝ եղել է պաշտոնատար անձ:

Վերոգրյալ տրամաբանական հարցադրման համատեքստում հարկ է նաև վկայակոչել քննիչի կողմից մեղադրական եզրակացության նկարագրական մասում նշված հետևյալ հանգամանքները. «(...) «Զորա ՀԷԿ» ՓԲ ընկերության գույքի օտարման գործընթացում պաշտոնեական լիազորությունների չարաշահման, ինչպես նաև վերջինի հետ առնչվող՝ այլ անձանց կողմից փողերի լվացման առերևույթ հանցանքների դեպքերի առթիվ 2019 թվականի մայիսի 06-ին նախաձեռնված (հարուցված) և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քննվող թիվ 58158519 քրեական վարույթով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածով սահմանված՝ քննիչի լիազորությունների իրականացման՝ նախաքննության ընթացքում, պաշտոնատար անձ հանդիսացած՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի և ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնները զբաղեցրած Միքայել Արայի Մինասյանի կողմից առերևույթ կատարված ենթադրյալ այլ՝ ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու և հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույք օրինականացնելու առերևույթ հանցանքների դեպքերի առթիվ ներկայացված հաղորդման հիման վրա 2023 թվականի մայիսի 25-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախաձեռնվել է թիվ 62233123 քրեական վարույթը, որը նույն օրը կայացված որոշմամբ միացվել է թիվ 58158519 քրեական վարույթին:

(...)

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում հայտնաբերվել են մեղադրյալի բացակայությամբ վարույթ իրականացնելու իրավական և փաստական

հիմքեր, նաև առերևույթ առկա են եղել քրեական վարույթը մեղադրյալ Միքայել Մինասյանի մասով մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու հիմքեր, մինչդեռ թիվ 58158519 քրեական վարույթի մնացած դրվագներով անհրաժեշտ է եղել շարունակել նախաքննության կատարումը, հաշվի առնելով նաև Միքայել Մինասյանի մեղադրանքի մասով թիվ 58158519 քրեական վարույթից նոր վարույթի անջատումը թելադրված է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ և չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա, ուստի 2023 թվականի հոկտեմբերի 26-ին կայացված որոշմամբ թիվ 58158519 քրեական վարույթից ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրյալ Միքայել Արայի Մինասյանի վերաբերյալ անջատվել է նոր՝ թիվ 62267323 քրեական վարույթը (...)»:

Այսինքն՝ վերոգրյալից ևս պարզ է դառնում, որ կոռուպցիոն հանցագործություններ հանդիսացող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 310-րդ հոդվածով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցված թիվ 58158519 քրեական վարույթից ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրյալ Միքայել Արայի Մինասյանի վերաբերյալ նոր՝ թիվ 62267323 քրեական վարույթի անջատումը պայմանավորված է եղել բացառապես այն հանգամանքով, որ նախաքննության ընթացքում հայտնաբերվել են մեղադրյալի բացակայությամբ վարույթ իրականացնելու իրավական և փաստական հիմքեր, նաև առերևույթ առկա են եղել քրեական վարույթը մեղադրյալ Միքայել Մինասյանի մասով մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու հիմքեր:

Ընդ որում՝ վերոգրյալ եզրահանգումների համատեքստում հատկապես ուշադրության է արժանի փողերի լվացման հանցակազմի մեկնաբանության մասին Արսեն Սարգսյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կատարված (...) արձանագրումը.

(...)

Այսպիսով՝ վերոգրյալ եզրահանգումների պայմաններում հարկ է արձանագրել, որ մեղադրյալ Միքայել Մինասյանին մեղսագրվում է կամ պաշտոնեական դիրքն օգտագործելով, կամ էլ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ

դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով ենթադրյալ արարքի կատարում, հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ առարկայական ընդդատության կանոններով քրեական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանը չէր կարող փոխանցել առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (…)»[3]:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0589/01/24 (ՀԿԴ/0278/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

---

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 49, թերթեր 77-90:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

Միևնույն ժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապաշարմունքվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այդ որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը նույն ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

13.1. «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Օրենսգրքի հավելված N 1-ում՝*

*1) **«Հոդված 296. Փողերի լվացումը»** բառերը փոխարինել **«Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով (…)»:*

Վերոգրյալից հետևում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված ՀՕ-31-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածին) նախատեսված հանցանքը հանդիսանում է կոռուպցիոն բնույթի և ենթակա է քննության Հակակոռուպցիոն դատարանում, եթե կատարվել է ***«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով»***:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ համաձայն մեղադրյալ Միքայել Մինասյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման՝ վերջինս մեղսագրվող ենթադրյալ հանցանքը չի կատարել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, գտել է, որ սույն քրեական վարույթն այլևս ընդդատյա չէ հակակոռուպցիոն դատարանին[7]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, արձանագրելով, որ մեղադրյալ Մ.Մինասյանին մեղսագրվում է կամ պաշտոնեական դիրքն օգտագործելով, կամ էլ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով ենթադրյալ արարքի կատարում, գտել է, որ քրեական վարույթը ենթակա չէր փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան[8]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալ Միքայել Մինասյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման բովանդակությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված ենթադրյալ հանցանքը ***«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու»*** եղանակով կատարելու հատկանիշը վերջինիս մեղսագրված չէ: Հետևաբար, հիմք ընդունելով գործը բացառապես անձին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների սահմաններում քննելու օրենսդրական պահանջը, գտնում ենք, որ Մ.Մինասյանի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման պայմաններում, սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը բացակայում է:

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0589/01/24 (ՀԿԴ/0278/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր չէ:

17. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/0589/01/24 (ՀԿԴ/0278/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Միքայել Արայի Մինասյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190–րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԵԴ1/0589/01/24 (ՀԿԴ/0278/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ